ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<30>> 07 2014թ. N: 190-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 79-րդ կետի և 101–րդ կետի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 7-րդ, 9-րդ, 11-րդ, 15-րդ և 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու N23 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2014 թվականի հուլիսի 17-ի նիստի թիվ 52 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2014 թվականի հունիսի 18-ի նիստի թիվ 5 արձանագրությունը.

որոշում եմ.

4. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու N23 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Ջեմմա Ջայիմցյանի և մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Արմինե Ադամյանի լիազորությունները և նրանց փոխարեն խորհրդի կազմում հաստատել համապատասխանաբար Արմեն Ստամբոլցյանին և Անահիտ Բաղասյանին:

5. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու N23 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝ ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Ռուզաննա Կոշտոյանի և Հրաչ Ճուղուրյանի լիազորությունները և նրանց փոխարեն խորհրդի կազմում հաստատել համապատասխանաբար Նվարդ Ադամյանին և Գոհարիկ Մազմանյանին:

6. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին>> N 51-Ա որոշման N16 հավելվածում <<Ջայիմցյան Ջեմմա>>,<<Ադամյան Արմինե>>,<<Կոշտոյան Ռուզաննա>>, <<Ճուղուրյան Հրաչ>> բառերը համապատասխանաբար փոխարինել <<Ստամբոլցյան Արմեն>>, <<Բաղասյան Անահիտ>>,<<Ադամյան Նվարդ>>,<<Մազմանյան Գոհարիկ>> բառերով:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝